

«Ա. Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Գեղարքունիքի տարածաշրջանային մասնաճյուղ



**ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

*ՆՈՅԵՄԲԵՐ*

*2021 թ.*

## **«Ինչ որ Վարդենիսում կատարվում է, ես գլխով տեր եմ». Արամ Մելքոնյան**

Երեկ անդրադարձել էինք Վարդենիսում սոցիալական փաթեթների բաժանմանը: Մեզ լուսանկար էին ուղարկել, որում երևում էր Մշակույթի տան հետնամասում օգնություն ստացողների հերթը:

Վարդենիսի բնակիչներն էին ուղարկել «Հրապարակին» լուսանկարը, պնդելով, որ ՏԻՄ ընտրությունից առաջ տեղահանված արցախցիների անվան տակ ալյուր, բրինձ ու ձեթ են նվիրում նաև Վարդենիսում գրանցված և ընտրության իրավունք ունեցող քաղաքացիներին:

Վարդենիսի քաղաքապետ, ՔՊ ցուցակի առաջին համար Արամ Մելքոնյանը մեզ ասաց, որ չգիտի, թե ինչ օգնության մասին է խոսքը, իսկ նրա խորհրդական Ռոբերտ Ստեփանյանն էլ վստահեցրեց, որ սնունդ ու հիգիենիկ պարագաներ են, բաժանվում միայն Արցախից տեղահանվածներին, որոնք ընտրության իրավունք չունեն:

«Բա եթե արցախցիների համար ա մենակ, մինչևի հիմա ինչո՞ւ չէին անում», - հակադարձում էր հերթը լուսանկարող բնակիչը:

Վանդենիսի քաղաքապետ, իշխանական թիմի քաղաքապետի թեկնածու Արամ Մելքոնյանը երեկ կրկին կապ հաստատեց մեզ հետ, հերքելով իր բնակչի ներկայացրած տվյալները:

Նա ասաց, որ փախստականներին պարբերաբար 45 օրը մեկ ֆուռով բերել են օգնություն, մշակույթի պալատում փաստաթղթով հատկացված, որտեղ տարբեր կառույցներից եկող օգնությունը տեղավորելու համար սենյակ են հատկացրել:

«16, կամ 17-րդ անգամն է, որ այդտեղից օգնություն են տալիս արցախցի փախստականներին: Այն գալիս է տարբեր պետական կառույցներից, բարեգործականներից, և հասցեավորված բաժանվում է փաստաթղթով, ամեն ինչ գրանցվում է: Ես վստահ եմ, որ Վարդենիսի ոչ մի բնակիչ, ընտրող այն չի ստացել: Այդ օգնության հետ անպայման անվանացուցակ է գալիս: Մենք 44-օրյայից հետո 200-ից ավելի արցախցի ունենք և բոլոր օգնություն ստացողները պատշաճ գրանցվել են»:

Քաղաքապետը նեղսրտել է մեր նյութից: «Կին կա, դուռը պոկվել, ընկել է տան վրից, հիմա ես մարդ չեմ կարողանում ուղարկել, որ սարքեն, որ չասեն՝ քաղաքապետը կաշառք է բաժանում: Ինձ ժողովուրդը լավ ճանաչում է, վստահում է, խնդրում եմ՝ հարցրեք ժողովրդից, տասը տոկոսը կարող է, դժգոհ են, չեմ ժխտում, բայց համոզված եմ, հանրապետության համայնքներում այդքան գործ չեն արել, ինչքան որ Վարդենիսում: Փաստաթղթով, մեկ առ մեկ, ամեն ինչ բաժանվում է: Ամեն ինչի համար, ինչ որ Վարդենիսում կատարվում է, ես գլխով տեր եմ, եթե մի բան նկատեք, դիմեք դատախազություն», - ասում է Արամ Մելքոնյանը:

Սյուզան Սիմոնյան

<https://hraparak.am/post/cc747a5eaa4c11eed3343dde4cb325f1>

30.11.2021

## **«Հրապարակ». Վարդենիսի քաղաքապետարանն ընտրությունից առաջ օգնություն է բաժանում**

Վարդենիսի քաղաքապետարանն ընտրությունից առաջ օգնություն է բաժանում՝ այլուր, բրինձ, ձեթ. այս մասին մեզ ահազանգեցին Վարդենիսի բնակիչները: Նրանք լուսանկարել են այն տարածքը, որտեղ հերթ է գոյացել՝ Մշակույթի տան հետնամասը: Հիշեցնենք, որ հենց օգնություն բաժանելու համար է մեղադրանք առաջադրվել Գորիսի համայնքապետին, եւ նա մոտ 5 ամիս է՝ կալանավորված է: Վարդենիսի քաղաքապետ, ՔՊ ցուցակի առաջին համար Արամ Մելքոնյանը մեզ ասաց, որ չգիտի, թե ինչ օգնության մասին է խոսքը. «Ես այս օրերին անընդհատ գյուղերում եմ, քարոզարշավի, քաղաքապետարանում շատ քիչ եմ լինում, զանգեք իմ խորհրդակցանին»:



Քաղաքապետի խորհրդական Ռոբերտ Ստեփանյանն էլ չհերքեց, որ օգնություն են բաժանում. «Մնունդ ու հիգիենիկ պարագաներ ենք բաժանում, բայց մենակ արցախցիներին»: Իսկ մեր աղբյուրը պնդում է, որ Արցախից տեղահանվածներն ընդամենը «ատմազկա» են: «Ատմազկի համար տենց են ասում՝ որ տեղահանված արցախցիներին են տալիս, բայց իրանց ընտրողները բոլորն էլ ստանում են, սովորական ընտրողներին էլ են տալիս: Մա առաջին դեպքն ա, որ քաղաքապետարանն օգնություն ա բաժանում արցախցիներին: Բա եթե արցախցիների համար ա մենակ, մինչեւ հիմա ինչո՞ւ չէին անում»: Վարդենիսում ՏԻՄ ընտրությունը նշանակված է դեկտեմբերի 5-ին:

Սյուզան Սիմոնյան

<https://hraparak.am/post/db5cf9c7370bd99220d0e59bc3c80a2e>

25.11.2021

## **«Հրապարակ». Չորամասեր են կանչել մարտական հերթապահության մեջ չգտնվող պայմանագրայիններին**

«Հրապարակ» թերթը գրում է. «Թեև իշխանություններն ու պատկան գերատեսչությունները լռում են եւ չեն հաստատում հայ-ադրբեջանական սահմանին կուտակումների մասին տեղեկությունները, սակայն բանակում արդեն մի քանի օր է, ըստ տեղեկությունների, համար մեկ դրություն է հայտարարված»:

Սյունիքից ու Գեղարքունիքից մեզ լուրեր են հասնում, որ զորամասեր են կանչել մարտական հերթապահության մեջ չգտնվող պայմանագրայիններին եւս եւ ասել, որ մինչեւ նոյեմբերի 25-26-ը ներառյալ պետք է մնան զորամասերում կամ անցնեն մարտական հերթապահության՝ ինչ-ինչ հնարավոր զարգացումներով պայմանավորված»:

<https://news.am/arm/news/674137.html>

## **Մեկ տարի առաջ առանց կրակոցի թշնամուն հանձնվեց անառիկ Քարվաճառը**

1993 թ. ապրիլի 5-ին ամբողջ հայ ազգը ցնծում էր. հայկական զինված ուժերը դուրս էին եկել Օմարի լեռնանցք՝ այդպիսով ավարտին հասցնելով Արցախի միջնաբերդ Քարվաճառի ազատագրումը: Քարվաճառի ազատագրումը կենսական անհրաժեշտություն էր Արցախի հյուսիսի անվտանգությունն ապահովելու համար: Թշնամուն Քարվաճառից դուրս շարտելու և ադրբեջանական կրակակետերը լռեցնելու գործողությունը ընթացավ մարտի 27-ից ապրիլի 2-ը:

Քարվաճառի հաղթական ռազմական գործողությունը ղեկավարում էին Գուրգեն Դալիբալթայանը, Հրաչ Անդրեասյանը (Արևմտյան ուղղություն), Յուրի Խաչատուրովը (Լաչինի ուղղություն) և Մոնթե Մելքոնյանը (Մարտակերտի ուղղություն):

Քարվաճառի ազատագրումից հետո սկսվեց հայերի վերադարձը, վերակառուցումը, վերաբնակեցումը. Արցախի միջնաբերդը սկսել էր շնչել: Սփյուռքը, բազմաթիվ գործարարներ զբաղվում էին շրջանի տնտեսական զարգացմամբ: Այսպես՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը միայն Քարվաճառում և Քաշաթաղում՝ Արցախը Հայաստանին կապող կենսական տարածքներում, ամենաշատ ներդրումներն էր կատարել՝ ենթակառուցվածքների, հասարակական շինությունների կառուցման, սոցիալական ապահովության, առողջապահության, կրթության, պատմամշակութային արժեքների պահպանության, արվեստի եւ սպորտի բնագավառներում և այլն, բայց...

Ազատագրումից 27 տարի անց հայ ազգն այլևս չէր ցնծում. Քարվաճառը դավաճանվել էր: Մեկ տարի առաջ այս օրը՝ 2020 թ. նոյեմբերի 25-ին՝ ռազմական գործողությունների դադարից 15 օր անց, Արցախի միջնաբերդը դավաճանաբար հանձնվեց թշնամուն՝ առանց որևէ կրակոցի, հանձնվեց՝ համաձայն նոյեմբերի 9-ին ստորագրված դավաճանական փաստաթղթի:

Կապիտուլյանտ Նիկոլ Փաշինյանը դեռ պատերազմի ժամանակ՝ հոկտեմբերի վերջին, ռազմական գործողությունները դադարեցնելու առաջարկ էր ստացել (նոյեմբերի 9-ի նման հակահայկական փաստաթուղթ, բայց ավելի մեղմ), սակայն մերժել էր. ըստ այդ առաջարկի՝ Քարվաճառն ու Քաշաթաղը մնում էին Արցախի ՊԲ վերահսկողության տակ:

Երբ հայտնի դարձավ Քարվաճառի հանձնման մասին, Արցախի հյուսիսային, հյուսիսարևմտյան շրջանը դարձյալ դատապարտվեց հայաթափման: Սկսվեց շրջանից գաղթը. շրջանը լքելու համար հատկացված սեղմ ժամկետները չէին բավականացնում բնակչությանը, որ՝ հանեն իրենց շարժական ու անշարժ գույքը, անասուններին, մշակութային նմուշները: Հայրենագրված բնակչության մի մասը հարկադրված այրում էր այն ամենը, ինչ չէր կարողանում հանել Քարվաճառից, որպեսզի այն չվայելի թշնամին:

Քարվաճառը տասնամյակներ պահող գորամասերը պայթեցվեցին. զինվորները նոյեմբերի 24-ին վերջին անգամ նկարվում էին Քարվաճառում՝ որպես հուշ երբեմնի անառիկ Քարվաճառը անառիկ պահող զինվորներից:

Այսօր արդեն Քարվաճառում վխտում են թշնամիները, թունելներ փորում, ճանապարհներ կառուցում (այսպես կոչված՝ ապագա «միջանցքի» համար), և որ ամենազիլավորն է՝ սպառնում են Հայաստանի տարածքային ամբողջականությանը. օկուպացված Քարվաճառից թշնամին հարձակումներ է իրականացնում Վայոց ձորի, Գեղարքունիքի վրա, ահաբեկում հայ խաղաղ բնակչությանը, գերեվարում և սպանում զինվորներին:

Քարվաճառի կորստի վերքը երբեք չի սպիանա, Հայաստանն ամեն օր կզգա Քարվաճառի հանձնման հետևանքները, կզգա մինչև այն պահը, երբ այնտեղ դարձյալ կծածանվի Հայաստանի դրոշը, և Քարվաճառը մեզ կողջունի «Քարվաճառը հայոց միջնաբերդն է» ցուցանակով:

<http://yerkir.am/news/view/254339.html>

24.11.2021

## **Ադրբեջանական ինքնաթիռը ՀՀ օդային տարածքով կրկին թռիչք է իրականացրել**

Հունական «Aegean Airlines» ավիաընկերության ինքնաթիռը նոյեմբերի 24-ին իրականացրել է Լառնակա-Բաքու չվերթը Հայաստանի օդային տարածքով:

Flightradar24.com-ի ներկայացրած տվյալների համաձայն՝ ինքնաթիռը հատել է հայ-թուրքական սահմանը ՀՀ Արմավիրի մարզի Երվանդաշատ գյուղի մոտ, թռիչք է իրականացրել Երևանի Էրեբունի վարչական շրջանի, ապա Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի վրայով եւ շարունակել թռիչքը դեպի Բաքու:

Նշենք, որ Հայաստանի օդային տարածքով «Ադրբեջանի ավիաուղիների» առաջին թռիչքի մասին հայտնի է դարձել 2021 թվականի հոկտեմբերին, երբ ընկերության ինքնաթիռը ներքին չվերթ է իրականացրել Բաքու-Նախիջևան-Բաքու երթուղով:

<http://yerkir.am/news/view/254276.html>

24.11.2021

## **Ճամբարակում զինճառայողին ծեծի են ենթարկել, դաժան վերաբերմունք ցուցաբերել, հասցրել ինքնասպանության. երկու հոգի կալանավորվել է**

2021թ. նոյեմբերի 15-ին Ճամբարակ համայնքում տեղակայված զորամասի պայմանագրային զինճառայող, շարքային՝ Գևորգ Ավետյանի՝ մարտական դիրքում, ըստ նախնական տվյալների, արթուն հերթավոխի ժամանակ իրեն ամրակցված «ԱԿ-74» տեսակի ինքնաձիգից արձակված կրակոցների հետևանքով որովայնի շրջանում ստացած վիրավորումներից մահվան դեպքի առթիվ ՀՀ ՔԿ ՋՔԳՎ հինգերորդ կայազորային քննչական բաժնում նույն օրը հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով, որի նյութերով հաջորդ օրը՝ նոյեմբերի 16-ին, հարուցվել է ևս մեկ քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 360. 1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով: Նշված քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, այս մասին հաղորդում է ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Գոռ Աբրահամյանը

Նա հայտնել է, որ նոյեմբերի 16-ին հիշյալ հանցագործությունները կատարելու կասկածանքով ձերբակալվել են Գ. Ավետյանի երկու ծառայակիցները:

«Կատարված նախաքննության արդյունքում նոյեմբերի 19-ին նրանցից մեկին՝ պայմանագրային զինճառայող, շարքային Ա. Ս.-ին ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղարդանք է առաջադրվել մարտական հերթապահություն կրելու ընթացքում նույն գումարտակի պայմանագրային զինճառայող,

շարքային Գ. Ավետյանի նկատմամբ դաժան վերաբերմունք դրսևորելու, նրա անձնական պատիվն ու արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու, բռնություն գործադրելու միջոցով վերջինիս ինքնասպանության հասցնելու, զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելու, նույն գորամասի պայմանագրային զինծառայողի ծեծի ենթարկելու, ֆիզիկական ցավ պատճառելու համար: Իսկ մյուսին՝ պայմանագրային զինծառայող, շարքային Ա. Ա.-ին նույն օրը՝ նոյեմբերի 19-ին, մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ ՁՈԻ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ և 16-րդ հոդվածներով նախատեսված զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելու՝ մարտական հենակետում նույն գորամասի պայմանագրային զինծառայողի ծեծի ենթարկելու, ֆիզիկական ցավ պատճառելու համար», - նշել է Աբրահամյանը:

Նա հայտնել է, որ նույն օրն իսկ միջնորդություն է ներկայացվել ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ 2 մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, որը նույն օրը բավարարվել է և նրանք կալանավորվել են:

«Արդեն նոյեմբերի 17-ին և 18-ին վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ նշանակվել են փորձաքննություններ, հարցաքննվել է մարտական հենակետի ողջ անձնակազմը, որոշում է կայացվել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու մասին և այլն: Այսինքն՝ ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցները՝ լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն ապահովելու, զինծառայողի մահվան հանգամանքները լիարժեք պարզելու և ներգրավված անձանց գործողություններին վերջնական իրավական գնահատականներ տալու համար

Նկատի ունենալով, որ, ըստ էության, նախաքննությունը նոր սկսված լինելու, քրեական գործով այս պահին ձեռք բերված փաստական տվյալներից բացարձակ անտեղյակության պայմաններում առանձին շրջանակների կողմից արդեն իսկ սկսվել են անհարկի շահարկումներ և սուբյեկտիվ մեկնաբանություններ՝ հորդորում եմ ողբերգական դեպքի նկարագրության, որակման առումով ձեռնպահ մնալ իստ ժամանակավրեպ և չհիմնավորված գնահատականներից ու մեկնաբանություններից՝ քննության նկատմամբ հանրային կանխակալ կարծիք չձևավորելու համար:

Կրկնում եմ՝ քննությունը նոր է սկսվել, վարույթի ընթացքում անհրաժեշտ գործողությունների, քրեական հետապնդման համատեքստում իրականացված միջոցառումների ներկայացված պարզ ժամանակագրությունը պետք է հուշի, որ դրանք չէին կարող պայմանավորված լինել դեպքից շուրջ մեկ շաբաթ անց մամուլում տրած մեկնաբանություններով և կարծիքներով:

Չկա ու չի կարող լինել դեպքը, հանցագործությունը կոծկելու որևէ միտում:

Դատախազությունն ապահովելու է հետևողական հսկողություն քննության օրինականության նկատմամբ, որի արդյունքներից ելնելով՝ ըստ անհրաժեշտության և հանրային պահանջի՝ պարբերաբար կտրվի անհրաժեշտ տեղեկատվություն», - ֆեյսբուքյան իր էջում գրել է Գոռ Աբրահամյանը:

<http://yerkir.am/news/view/254242.html>

23.11.2021

## **Աղբբեջանական ինքնաթիռը ՀՀ օդային տարածքով Նախիջևանից Բաքու թռիչք է կատարել**

Աղբբեջանական «AZAL» ավիաընկերության ինքնաթիռը Հայաստանի օդային տարածքով թռիչք է կատարել Նախիջևանից Բաքու:

Flightradar24.com-ի ստացած տվյալներից երևում է, որ ինքնաթիռը թռել է Վայոց ձորի մարզում Ջերմուկի, Գեղարքունիքի մարզում Վարդենիսի, ինչպես նաև Արցախի օկուպացված տարածքների վրայով, այնուհետև ուղևորվել Բաքու:

Նշենք, որ Հայաստանի օդային տարածքով աղբբեջանական ավիաընկերությունների առաջին թռիչքի մասին հայտնի դարձավ 2021 թվականի հոկտեմբերին, երբ «AZAL»-ը ներքին չվերթ կատարեց Բաքու-Նախիջևան-Բաքու երթուղով:

<https://yerevan.today/all/society/93102/adrbedjanakan-ingnatiry-hh-odayin-taratsgov-naxidjeuanic-bagou-trichq-e-katarel>

22.11.2021

## **Վարդենիսի քաղաքապետը՝ նոր փրկիչ. չկայացած ինքնասպանը նրա հարեւան գյուղից է**

Ինքնասպանության իմիտացիան հայկական «փիար» արսենալում իր ուրույն տեղն ունի: Միեման պարզ է, աղմուկը երաշխավորված, փրկչի իմիջը՝ նույնպես: Իսկ ո՞ւմ փրկիչ պետք չի, հատկապես երբ ընտրությունների համար լավագույնս աշխատող իմիջը փրկիչն է: Մարդը հասնում է որևէ կամրջի, որպես կանոն՝ սոցիալական վատ վիճակից, հուսահատված: Այդ նույն պահին նույն կամրջի վրա տվյալ պաշտոնյան է հայտնվում, ում փիառի համար բեմադրվել է ներկայացումը: Պաշտոնյան փրկում է ինքնասպանին, նրան օգնելու խոստումներ է տալիս, ու բոլորը գոհ ու երջանիկ գնում են տուն:

Երեկ առավոտյան կամրջի վրայով անցնող պաշտոնյան Վարդենիսի քաղաքապետ, առաջիկա ՏԻՄ ընտրություններում ՔՊ ցուցակի առաջին համար Արամ Մելքոնյանն էր:

Առավոտյան ՋԼՄ-ներով տեղեկություն տարածվեց, որ 38-ամյա տղամարդը, Արտակ Ս-ն, «Հաղթանակ» կամրջի վրա անցել է վտանգավոր եզրագիծն ու սպառնում է ինքնասպան լինել: Ոստիկանները, ԱԻՆ աշխատողները վազեցին եկան, նույնիսկ հոգեբան: Բայց ոչ ոք չկարողացավ նրան համոզել, որ կյանքին վերջ չտա, ու միայն Արամ Մելքոնյանը, որը պատահաբար անցավ կողքով, համոզեց նրան փոխել որոշումը:

Մենք փորձեցինք պարզել, թե ո՞վ է Արտակ Ս-ն, ինչո՞ւ է որոշել վերջ տալ կյանքին և ինչո՞ւ է հենց այդ պահին կամրջով անցել ՔՊ ցուցակի առաջին համարը ու պարզեցինք: Ուրեմն, «քցվողը»՝ Արտակ Ս-ն, Վարդենիսի Փամբակ գյուղից է: Փամբակը քաղաքապետ Արամ Մելքոնյանի հարազատ Արեգունի գյուղի հարևան համայնքն է: Մեր ծանոթը Վարդենիսից վստահեցնում է, որ Արտակ Ս-ին ինքնասպանության վայր է բերել հենց քաղաքապետը իր մեքենայով: «Ես առավոտյան լսեցի դեպքի մասին, իմացա, որ առավոտ ժամը յոթին քաղաքապետը գնացել է Փամբակ, Արտակին վերցրել է Փամբակից ու իրար հետ եկել են Երևան:

Չալարեցի, ավտոն նստեցի, քշեցի Երևան, տենամ՝ Սանոսյան Գնելը մոտտի վրա կանգնած», - պատմում է Վարդենիսի բնակիչ Է. Մ-ն:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, որը շուտի մյուս պերտնաժն է, հավանաբար, եւ որը նախկինում Գեղարքունիքի մարզպետ էր աշխատում, Արամ Մելքոնյանի «կնքահայրն» է պաշտոնյաների ՔՊ Օլիմպոսում: Հենց նա է ժամանակին «դուրս գրել» Մելքոնյան Արամին Ռուսաստանից, որտեղ վերջինս բիզնեսմեն էր, հարյուրավոր արտագաղթած ու ՌԴ-ում գործ անող գեղարքունիքցիների նման:

Կապվեցինք Վարդենիսի քաղաքապետի հետ, նրան մեր կասկածները հայտնեցինք: «Ինքը Փամբակ գյուղի բնակիչ էր, Աբովյանից է, բայց ապրել է Փամբակում: Հինգ երեխա ուներ, կինը չէր թողնում երեխաներին տեսնել», - ներկայացրեց իր «զեմյակին» և նրա չստացված ինքնասպանությունը ՔՊ առաջին համարը:

- Պատմում են, որ դուք Արտակի հետ միասին եք եկել առավոտյան Երևան:

- Ես նրան այսօր առավոտյան առաջին անգամ եմ տեսել կամրջի վրա, մեկ էլ երեկ չէ առաջին օրը, Փամբակում քարոզարշավին եմ տեսել, հեռվում կանգնած էր, բայց դեմքը մի կերպ հիշեցի:

- Ակտիվ ընտրող է, փաստորեն:

- Չգիտեմ ինչ է, հեռվում կանգնած էր, ինձ թվաց, մեզ հետևող ա, որովհետև Փամբակ գյուղում տենց ակնոցներով մարդ չի լինում: Ես միամիտ, պոռբկա էր, գնացել էի թաղում, իմ ու ընկերոջս, Սանոսյանի հայրիկն էր մահացել:

- Բայց հիմա ոչ ոք չի հավատա, որ սա փիար քայլ չէր...

- Ես բոլորին խնդրում եմ իրենց էջերից հանեն էս դեպքը: Ըտեղ ինչ կա փիարի: Ես երեկ պետք է գայի պանիխիդայի, բայց Հայկ Սարգսյանը եկել էր, ամբողջ օրը բարձրացել ենք դիրքեր: Թողեցի, առավոտ եկա: Պորբկի մեջ տեսա, ասի՝ էս մարդու դեմքը ծանոթ ա, ուստիկանին ասի՝ կարա՞մ ֆոամ կայնեմ: Տոացի, կանգնա, իջա, ասի՝ կարող ա, ինձ ճանաչում ես, Արտակ ջան:

Արամ Մելքոնյանն ասաց, որ Սանոսյանը խոստացել է, որ կխոսի ինքնասպանի կնոջ հետ, իսկ ինքը՝ Արամը, համարը տվել է, ասել է՝ որ պահին նեղվես, զանգի:

Որքան էլ ուզում ենք հավատալ քաղաքապետ Մելքոնյանին, կասկածի որդը ներսից տանջում է մեզ: Որդը հիշեցնում է, որ 2015-ին Թուրքիայի նախագահ Էրդոհանը կանգնեցրեց ինքնասպանի, որը պատրաստվում էր ցած նետվել Բոսֆորի նեղուցի կամրջից: Հայաստանում սխեման առաջինը կիրառել են ԱԻ նախկին նախարար, լուսահոգի Արմեն Երիցյանի «փիարշիկները», նույն 2015 թվին: Նախարարը Դավթաշենի կամրջի վրա տեսախցիկների առաջ մի երիտասարդի «հանեց» կամրջից:

Բոլորովին վերջերս էլ, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արսեն Թորոսյանն էր ճիշտ ժամանակին ճիշտ տեղում հայտնվել ու վրաերթի ենթարկված հետիոտնին առաջին օգնություն ցույց տվել՝ մինչ կժամանեին շտապօգնության բժիշկները: Ճիշտ տեղում ու ճիշտ ժամի հայտնվել էր նաև Շամշյանը: Այս զարմանալի միջադեպից հետո սոցիալական ցանցերում Թորոսյանին անվանում էին «սուպերմեն»: Այդպես է: Հայաստանում այլևս փրկիչներին չեն հավատում:

<https://hraparak.am/post/40f2f99a213924fe181e03bcf02b0741>



22.11.2021

## **Գեղարքունիքում ադրբեջանական կողմի կրակոցի հետևանքով ժամկետային զինձառայող է գոհվել. ՊՆ**

Նոյեմբերի 22-ին՝ ժամը 18:10-ի սահմաններում, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրակ են բացել հայ-ադրբեջանական սահմանի, մասնավորապես՝ Գեղարքունիքի մարզի Նորաբակ գյուղի հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ, ինչի հետևանքով մահացու հրազենային վիրավորում է ստացել ՀՀ ՊՆ N գորամասի ժամկետային զինձառայող, շարքային Սուրեն Յուրիկի Սաֆարյանը (ծնվ. 2002թ.): Այս մասին [Yerkir.am](http://Yerkir.am)-ը տեղեկանում է ՀՀ ՊՆ հաղորդագրությունից:

ՀՀ պաշտպանության նախարարությունը կիսում է կորստյան ծանր վիշտը և գորակցություն հայտնում Սուրեն Սաֆարյանի ընտանիքի անդամներին, հարազատներին և ծառայակիցներին:

Ժամը 19:30-ի դրությամբ փոխհրաձգությունը դադարել է:

<http://Yerkir.am/news/view/254059.html>

22.11.2021

## **Գեղարքունիքի մարզի Նորաբակ գյուղի ուղղությամբ փոխհրաձգություն է սկսվել. ՀՀ ՊՆ**

ԵՐԵՎԱՆ, 22 ՆՈՅԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Գեղարքունիքի մարզի Նորաբակ գյուղի ուղղությամբ հրաձգություն է սկսվել: «[Արմենպրես](http://Armenpress.am)»-ին այս մասին տեղեկացրեցին ՀՀ պաշտպանության նախարարությունից:

Արդյոք տուժածներ կան, թե ոչ հարցին պաշտպանության նախարարությունից պատասխանեցին, որ տվյալները ճշտվում են:

<https://armenpress.am/arm/news/1068852.html>

16.11.2021

## **Ադրբեջանը ծանր զինտեխնիկա է կուտակել Գեղարքունիքի սահմանի ուղղությամբ. Հակոբ Ավետյան**

Հայ-ադրբեջանական սահմանին տիրող իրավիճակը Գեղարքունիքի մարզի ուղղությամբ լարված է, ադրբեջանական կողմը ծանր զինտեխնիկա և կենդանի ուժ է տեղակայել: Տեղեկությունը Sputnik Արմենիային հայտնել է Գեղամասար խոշորացված համայնքի ղեկավար Հակոբ Ավետյանը:

«Այս պահին լարված է, որովհետև ծանր զինտեխնիկայի կուտակումներ կան, կրակոցներ են եղել: Դրանք եղել են տարբեր տրամաչափի զենքերով: Մեզ մոտ այս պահին զգոնության ամենաբարձր աստիճանն է», - նշել է Ավետյանը:

Նրա խոսքով՝ կուտակումներն արդեն լուրջ անհանգստություն են առաջացնում:

Զինտեխնիկական հատկապես նկատելի է Սոթք, Կուլթ և Նորաբակ գյուղերի սահմանին:

Գեղամասարի ղեկավարը հաստատեց Սոթքի հանքավայրի աշխատակիցներին տարհանելու լուրը և շեշտեց, որ այդ քայլին են դիմել, քանի որ աշխատանքներն իրականացվում են դիրքերին շատ մոտ հատվածներում: Ավետյանը վստահեցրել է, որ բնակչության տարհանման վերաբերյալ հրահանգ դեռ չկա, քանի որ կարծում են, թե իրավիճակը կհանդարտվի:

«Հերթապահություն են նշանակել Գեղամասար խոշորացված համայնքի բոլոր գյուղերում, ողջ աշխատակազմը գիշերային ժամերին հերթապահություն կիրականացնի, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանան արագ արձագանքել», – ասաց նա:

<https://hraparak.am/post/2303c8bbb8fa3e06ebd660771e8cd56a>

16.11.2021

## **Սոթքի հանքավայրի աշխատակիցները տարհանվել են**

Գեղարքունիքի մարզում գտնվող Սոթքի հանքավայրի աշխատակիցները տարհանվել են, հանքավայրի աշխատանքները դադարեցվել են: Այս մասին NEWS.am-ի հետ զրույցում ասաց «GeoProMining Gold» ընկերության ներկայացուցիչ Ռուզաննա Գրիգորյանը:

«Ես այս պահին կապ չունեմ հենց Սոթքի հետ, որ հասկանամ, թե այս պահին ինչ է կատարվում, բայց սահմանային գոտին անցնում է հանքավայրի տարածքով, դրա համար անվտանգության հարցն ապահովելու համար աշխատակիցները տարհանվել են և աշխատանքները դադարեցվել են»:

Ռուզաննա Գրիգորյանը տեղեկացրեց, որ հանքավայրում աշխատում է 700 մարդ:

Հիշեցնենք, որ հայ-ադրբեջանական սահմանի արևելյան ուղղությամբ վիճակը ծայրահեղ լարված է: Ադրբեջանական Զինված ուժերի ստորաբաժանումների հարձակման հետևանքով սկսված մարտերի արդյունքում հայկական կողմն ունի զոհեր և վիրավորներ, հայտնի է երկու մարտական դիրքի կորստյան մասին: Հայկական ՁՈՒ ստորաբաժանումները, համարժեք գործողություններով, հակառակորդին զինտեխնիկայի և մարդուժի մեծ կորուստներ են պատճառել:

Պաշտպանության նախարարությունը հայտնում է, որ հայկական կողմից գերեվարվել է 12 զինծառայող՝ 7 պայմանագրային և 5 ժամկետային զինծառայող:

<https://news.am/arm/news/672752.html>

03.11.2021

## **Գեղարքունիքում ադրբեջանցիների ներկայության պատճառով կան գյուղեր, որտեղ ընդհանրապես ջուր չկա. Թաթոյան**

Բացառիկ զարգացում էր այն, որ ԵՆԽԿ-ն սեպտեմբերի 27-ին ընդունեց բանաձև, որտեղ տեղ Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկը: Այս մասին մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը:

Նրա խոսքով այդ կետը հստակ ամրագրում է, որ անհրաժեշտ է բանակցություններ սկսել ապառազմականացված գոտի ստեղծելու ուղղությամբ: Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրեց նաև իրենց աշխատակազմի կողմից արված լուսանկարները Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի այն բնակավայրերից, որտեղ ադրբեջանական զորքերը մայիսի 12-ից առաջացել են:

Արման Թաթոյանը նշեց, որ Վերին Շորժայում մարդիկ ապրում են ընտանիքներով, արածացնում են կենդանիներին, և այդ տարածքին շատ մոտ դիրքավորվել են աղբբեջանցի զինվորականները:

«Այստեղ մեկ այլ խնդիր կա: Ջրավազան կա, որտեղից գոյանում է ոռոգման ջուր, ինչպես նաև խմելու ջուր: Սա նույնպես աղբբեջանական գործերի վերահսկողության ներքո է: Գեղարքունիքում աղբբեջանցիների ներկայության պատճառով ունենք գյուղեր, որտեղ ընդհանրապես ջուր չկա: Այս հարցն ինչպե՞ս է կարգավորվելու», -նշեց Արման Թաթոյանը:

<https://www.pastinfo.am/hy/news/2021/11/03/309bihr3x/1296269>

03.11.2021

## **Քաղաքապետի աթոռ՝ Աննա Հակոբյանին պատվելու դիմաց. Փաշինյանը վարձահատույց է լինում**

Դեկտեմբերի 5-ի ՏԻՄ ընտրություններում Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի քաղաքապետի թեկնածուի՝ նախկին ՀՀԿ-ական Հովհաննես Հովեյանի հարցում ՔՊ-ականները երկար-բարակ մտորելու պատճառ չեն ունեցել: Ավելին՝ այս կերպ Փաշինյանը Հովեյան ընտանիքի՝ ժամանակին արած լավության դիմաց վարձահատույց է լինում:

Ըստ մեր տեղեկությունների՝ երբ 2018-ին Աննա Հակոբյանը մեկնել էր Ռուսաստան՝ հանդիպելու ռուսաստանաբնակ խոշոր գործարարների հետ, որեւէ մեկը նրան չէր ընդունել, չէր պատվել, բացի Հովեյանի՝ Տյումենում ապրող մեծահարուստ բիզնեսմեն եղբորից՝ Աբրահամ Հովեյանից: Որպեսզի եղբայրն ավելի հպարտ ու ինքնագոհ քայլի Վարդենիկում, ասում են, նա Փաշինյանին բարձր դասի գրահապատ մեքենա էր նվիրել: ՀՀ վարչապետն էլ, լավության առավելագույն չափ սահմանելով, Աբրահամ Հովեյանի մի եղբորը բարձր պաշտոն է տվել պետական ապարատում, իսկ մյուսին՝ Հովհաննես Հովեյանին, Մարտունու քաղաքապետ դառնալու հնարավորություն ընձեռել:

2005թ.-ից նախկին «Թալանչիների» հետ սերտաճած, այսօր արդեն ճամբարափոխված ՀՀԿ-ականը քաղաքական հետազոտիչ ուրանալու հնարավորությունը ձեռքից բաց չի թողել: Դեկավար աթոռն այդպիսի բան է՝ ծառից ծառ պիտի թոչես, որ տակիցդ չփախչի: Հովեյանը Փաշինյանին անձնուրաց ծառայել է նաեւ 2020 թ. խոհրդարանական ընտրությունների ժամանակ՝ դռնեղուռ ընկած ձայն է «որսացել»:

Մենք արդեն մի առիթով գրել ենք, որ Նիկոլ Փաշինյանը կա՛մ ժողովրդին դրել է ապուշի տեղ եւ Սերժ Սարգսյանի ռեժիմի պարզ իրավահաջորդն է, կա՛մ էլ տառապում է թիմի ներսում կադրային «սովից» եւ կառչել է նախկին ռեժիմի այն մարդկանցից, որոնց ժամանակին մինչեւ հոգու խորքը իբր թե մերժում էր՝ մեղադրելով կոռուպցիայի եւ թալանի մեջ:

Yerkir.am-ի տեղեկություններով՝ Հովեյանը մարզում, շատ մեծ աթոռ զբաղեցնելու փափագով, ամենուր ներկայանում է որպես անկուսակցական՝ հանուն աթոռի մոռանալով նախկինների հետ անցած քաղաքական հետազոտիչ ու իր՝ ով լինելը: Նա գուցե մոռացել է, բայց Վարդենիկում երբեք չեն մոռանա: Պատմում են, որ Հովեյանի եւ Փաշինյանի սիրելի «նախկին կոռումպացված թալանչիների» միջեւ կապը բավականին ամուր է եղել, ինչի շնորհիվ Հովեյանին հաջողվել է համայնքում մի քանի բարեփոխումներ անել՝ այդպիսով արժանանալով վարդենիցիների վստահությանը:

Մեր աղբյուրի հաղորդմամբ՝ Հովեյանը գաղափարական ուղղվածություն էրբեք չի ունեցել: Պատերազմի ժամանակ ընդհատակ է անցել, իսկ երբ ադրբեջանցիները զավթեցին Գեղարքունիքի մարզի ռազմավարական նշանակության դիրքերը, որպես Վարդենիկի համայնքապետ՝ մարզի դիրքերից գեթ մեկ անգամ ելույթ չի ունեցել: Մի խոսքով՝ ով գալիս է իշխանության, մեր «հերոսը» հետևից վազում է:

«Հիմա էլ Մարտունու քաղաքապետ դառնալու համար ձեռնարկում է ՔՊ-ի հետևից: Խոշորացման տակ ընկած 17 համայնքների գյուղապետերի զգալի մեծամասնությունը բոլորովին այլ կողմնորոշում ունի: Եթե ՔՊ-ականները վարչական ռեսուրս գործի չդնեն, չստիպեն համայնքապետերին՝ աշխատել ՔՊ-ի օգտին, նրանց ծրագիրը կտապալվի», - հայտնեց մեր աղբյուրը:

Թեև Հովեյանը ուղիղ գծով ձգտում է դեպի քաղաքապետի աթոռը, գյուղի ժողովուրդը համարում է, որ այդ աթոռին նստելու համար արժանապատվություն, հայրենասիրություն եւ գաղափարական օրակարգ է պետք:

<http://yerkir.am/news/view/252217.html>

01.11.2021

## **Գավառում նորատուսցի Նարեկն՝ ընդդեմ «Գուրգեն Մարտիրոսյան» և «Մեր համայնքը» դաշինքների**

Դեկտեմբերի 5-ին կայանալիք ՏԻՄ ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիրը» որպես քաղաքապետի թեկնածու առաջադրել է նորատուսցի պատգամավոր Նարեկ Գրիգորյանի թեկնածությունը:

Նարեկ Գրիգորյանը հանրությանը հայտնի դարձավ Ազգային ժողովում մի քանի ուշագրավ հայտարարություններից հետո, երբ «սեպտեմբերի փոխարեն» ասաց «սեկտեմբեր», կամ երբ հայտարարեց, որ օրենքի նախագիծ է բերելու ԱԺ, որպեսզի կաթը թանկանա: Նարեկ Գրիգորյանը Ազգային ժողովում նաև ՔՊ-ի «էլիտար գվարդիայի» անդամ է. ծեծկոտուքների ժամանակ որպես «խարիզմատիկ նորատուսցի» նա առաջիններից է շտապում ընդդիմադիր պատգամավորներին ծեծելու, հենց նման ծեծկոտուքների ժամանակ էլ ԱԺ փոխխոսնակ Իշխան Սաղաթելյանը, դիմելով Նարեկ Գրիգորյանին, ասաց՝ «Դու սուս մնա, այ ձկնգող»:

Գավառի ընտրություններում Նարեկ Գրիգորյանը մրցելու է Գավառի գործող քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյանի հետ, նա առաջադրվելու է «Գուրգեն Մարտիրոսյան» դաշինքով, որը կազմված է «Քաղաքացու որոշում» և «Արդարություն» կուսակցություններից:

Գուրգեն Մարտիրոսյանն անկուսակցական է, նա Գավառի քաղաքապետի պաշտոնը զբաղեցնում է 2005 թվականից: Գավառում ընտրություններին մասնակցելու է նաև «Մեր համայնքը» դաշինքը, որի մասին դեռևս ոչինչ հայտնի չէ:

<https://hraparak.am/post/edf516c952796ab7e70f52e51729302a>